ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ապրիլի 2013թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի Հ. 273–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2 -րդ մասի 1-ին կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հուլիսի 19-ի «Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին» հ.273-Ա որոշման մեջ «7/յոթ/» բառերը փոխարինել «17 /տասնյոթ/» բառերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի Հ. 273-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի նկատմամբ Երևան համայնքի սեփականության իրավունքը գրանցվել է ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 9-ի «Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը սահմանելու մասին» հ.604-Ն որոշման հիման վրա:

Ներկայացված նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հուլիսի 19-ի N273-Ա որոշմամբ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքում քաղաքացի Արմեն Մուրադյանին տրամադրված 140.0քմ մակերեսով տարածքի վարձակալության ժամկետի երկարացում:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ նույն շենքում Արմեն Մուրադյանի կողմից նախկինում վարձակալության իրավունքով զբաղեցվում էր մեկ այլ տարածք, որը վերջինիս միջոցներով հիմնովին վերանորոգվել էր: Սակայն, քանի որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նշված շենքն անհրաժեշտ էր բաժանել երկու միավորների (վարչական և բիզնես հատվածների), իսկ Ա.Մուրադյանի կողմից զբաղեցված տարածքը գտնվում էր շենքի վարչական հատվածում, ապա վերջինիս առաջարկվեց վաղաժամկետ լուծել վարձակալության պայմանագիրը և տարածքը հանձնել գույքի սեփականատեր՝ Երևան համայնքին: Բանակցությունների արդյունքում քաղաքապետարանի առաջարկն ընդունվեց և առանց վարձակալի կողմից տարածքում կատարված անբաժանելի բարելավումների արժեքի հատուցման, գույքը հանձնվեց:

Հետագայում, Երևան քաղաքի ավագանու 19.07.2011թ. հ. 273-Ա որոշմամբ նույն շենքի բիզնես հատվածում վարձակալական հիմունքներով, նախկին պայմանագրով սահմանված ժամկետով և համարժեք մակերեսով, Ա.Մուրադյանին տրամադրվեց մեկ այլ տարածք: Սակայն տրամադրված տարածքն ընդունման պահին գտնվում էր անբարեկարգ և օգտագործման համար ոչ պիտանի վիճակում և նախատեսված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ էր այն հիմնովին վերանորոգել: Վարձակալի կողմից մինչ օրս կատարվել և կատարվում են տարածքի վերանորոգման բավականին ծավալուն աշխատանքներ՝ հիմնովին վերանորոգվում են նշված և հարակից տարածքների կոյուղագծերը, ամբողջովին փոխվել է տարածքի էլեկտրասնուցման համակարգը, արդիականացվել է տարածքի ճակատային մասը և այլն: Նկատի ունենալով, որ տարածքը գտնվում է առաջին հարկում, նախատեսվում է նաև բարեկարգել շենքի մուտքային և հարակից տարածքները:

Փաստորեն, կատարվող աշխատանքների մեծ ծավալի հետևանքով տարածքը դեռևս չի ծառայում իր նպատակին, սակայն զուգահեռաբար կատարվում են տարածքի վարձակալության և սպասարկման հետ կապված բոլոր վճարումները:

Նկատի ունենալով, որ կատարվող վերոհիշյալ ներդրումներն ու աշխատանքներն իրականացվում են Երևան համայնքի սեփականություն հանդիսացող վարչական շենքում, ինչպես նաև այն հանգամանքը, որ պայմանագրի ժամկետի ավարտից հետո փաստացի գործող օբյեկտը հանձնվելու է Երևան համայնքին և տարածքում կատարված անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվելու, Ա.Մուրադյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ խնդրելով երկարացնել վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը, ինչը հնարավորություն կտա շարունակել ներդրումները, պատշաճ մակարդակով ավարտին հասցնել վերանորոգման աշխատանքները և ծավալել ձեռնարկատիրական գործունեություն :

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 19.07.2011թ. հ.273-Ա որոշման հիման վրա Արմեն Մուրադյանի հետ կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետն ավելացնել տասը տարով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի Հ. 273–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հուլիսի 19-ի հ.273-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ առաջանում է «Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 8-ի հ.3552-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի Հ. 273–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հուլիսի 19-ի հ.273-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ